ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԸ. ՎԵՐԱԴԱ՞ՐՁ ՀԱՅՐԵՆԻՔ (Յիշողութեան Մարդաբանութիւն)[1]

Խորէն Գրիգորեան
xorenbask86@gmail.com

Քննարկման թեման առաջ է եկել 25 խորը կենսագրական հարցազրոյցների արդիւնքում: Հարցապնդուողները 22-60 տարեկան, տարբեր մասնագիտութեամբ, տեղի տարբեր մշակութային եւ եկեղեցական համայնքների ներկայացուցիչներ՝ Սիրիայի Քամիշլի, Հալէպ, Դամասկոս քաղաքներից ՀՀ հաստատուած հայեր են: Նաեւ խմբակային հարցազրոյցների անցկացման փորձ է արուել: Քննարկումների հիմնական նիւթն է եղել Սիրիական Ճգնաժամի տարիներին (2011-15)[2] հայերի ժամանումը Հայաստանի Հանրապետութիւն (ՀՀ) եւ այդ ներգաղթի քննարկումը սեփական տեսանկիւնից: Կարող ենք ասել, որ յստակ պատկերագրւում էր այս մարդկանց մէջ Սիրիայից՝ ՀՀ տեղափոխուելը ընկալել որպէս «գաղթի ճանապարհի շարունակութիւն», որը միտում ունի վեր հանելու Ցեղասպանութիւն ապրածների՝ արդէն 3րդ եւ աւելի սերունդների մօտ, Ցեղասպանութեան եւ դրա հետեւանքով գաղթի ճանապարհ բռնած «ճակատագրի» նորովի ընկալումը:

Այս երեւոյթի վրայ իր արձագանգն են թողել պաշտօնական եւ մամուլի կողմից սոյն տեղափոխութեան վերաբերեալ հնչեցուած մեկնաբանութիւնները: Այսպէս, օգտագործելով «վերադարձ», «գաղթ» եզրոյթները՝ դրանք որպէս բանալի եզրոյթներ մտան ներգաղթեալ սիրիահայերի բառապաշարի մէջ եւ Սիրիական Ճգնաժամի տարիների ՀՀում հաստատուելը «գաղթ», «վերադարձ» ընկալուեց, իսկ անձնական պատմութիւնը՝ որպէս «Ցեղասպանութեան եւ Մեծ Գաղթի» շարունակութիւն:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ուսումնասիրութեան հիմնական նպատակն է եղել առաւել լայն դիտարկման արժանացնել ոչ միայն սիրիահայերի ՀՀ ժամանման հիմնական պատճառները, այլ նաեւ այդ ժամանման ընկալումը՝ Ցեղասպանութեան յիշողութեան հոլովոյթում: Ազգագրական հարցումները կազմակերպուել են շուեցարական «ԿԱՋԱ մարդասիրական հիմնադրամ»ի[3] կողմից փախստականների աջակցութեան ծրագրի մասնակից սիրիահայերի շրջանակներում: Հարցումներ են անցկացուել

նաեւ սիրիահայ այն փախստական հայ ընտանիքների հետ, ովքեր ճգնաժամի սկզբնական շրջանում են ՀՀ եկել: Փորձ է արուել նաեւ սիրիահայերի՝ ՀՀ գաղթի վերաբերեալ միջազգային եւ տեղական մամուլի արձագանգները դիտարկել:

Ուսումնասիրութեան գլխաւոր խնդիրն է դիտարկել թէ ինչպէ՛ս են ներկայացուում Սիրիայից գաղթած եւ ՀՀում ժամանակաւոր կամ մշտական հաստատուած սիրիահայերը: Արդեո՞ք նրանք ներկայացուում են որպէս «վերագաղթեալներ», «վերադարձողներ» եւ «գաղթականնե՞ր», թէ՞՝ փախստականներ: Սրա հետ մէկտեղ հետաքրքիր է դիտարկել այս «գաղթի»՝ որպէս Ցեղասպանութեան յիշողութեան նոր խթան հանդիսանալը[4]: Որպէս ուսումնասիրութեան մեթոդ ընտրուել է խորը կենսագրական հարցազրոյցները:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀՈԼՈՎՈՅԹՈՒՄ

«Յիշողութեան աշխատանքը» իր մէջ ներառում է մշակութային եւ քաղաքական փորձառութիւն, որը հնարաւոր է դարձնում իմաստաւորել անցեալի նշանակութիւնը ներկայի հոլովոյթում:

Եթէ փորձենք գտնել հայկական ինքնութեան առանձնայատկութիւնները եւ փորձենք հարցման միջոցով հասնել ինքնադիտարկման արդիւնքների, ապա կը տեսնենք[5] որ այդ ինքնադիտարկման մէջ իր մեծ տեղն ունի Ցեղասպանութեան յիշողութիւնը: Այն հանդէս է գալիս ընդհանուր ողբերգական-տրաումատիկ յիշողութեան դիտանկիւնից եւ թէ ո՞վ է հայը եզրոյթ-հարցի շրջանակներում, հետաքրքիր է, որ տարբեր գաղթօճախներում, տարբեր դաստիարակութիւններ ստացած հայեր, թուարկելով հայի յատկանիշները, անպատճառ կը շեշտեն՝ Ցեղասպանութիւն ապրած լինելու փաստը: Ինչպիսի՞ տեղ ունի Ցեղասպանութիւնը հայոց ինքնութեան մէջ: Սա ընդհանուր ողբի-տրաուման է, որով հայերը միաւորուում են մի «ցաւ»ի, մի պատմութեան շուրջ, որը էթնիկ յիշողութեան ակունքներում է գտնուում[6]:

ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՈՍԿՈՐՆԵՐԻ ՎՐԱՅ ՍԿՍՈՒԵՑ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ. ՄԱՄՈՒԼԻ ԱՐՁԱԳԱՆԳ

2013 Դեկտեմբերի 1ին *The Independent*ում լոյս տեսաւ Ռոբերտ Ֆիսկի «Nearly a century after the Armenian genocide, these people are still being slaughtered in Syria» յօդուածը[7], որի առաջին հատուածում հեղինակը յիշում էր իր կողմից երեսնամեայ հնութեան պեղած «20րդ դարի չճանաչուած առաջին ցեղասպանութեան զոհ» հայերի կմախքներն ու

գանկերը: Կապելով սիրիական հակամարտութիւնը եւ այնտեղ հայերի զոհերը Հայոց Ցեղասպանութեան հետ՝ արդէն իսկ սոյն դէպքերի պատմական յիշողութիւնը հանրայնացւում էր, այն էլ օտար հեղինակի կողմից: Այսինքն, սիրիական հակամարտութիւնը սիրիահայերի տեսանկիւնից Ցեղասպանութեան յիշողութեան վերապրում էր դիտարկւում ոչ միայն դրա կրողների՝ հայերի կողմից, այլ նաեւ այլէթնիկ հասարակութիւնների կողմից: Սակայն հետաքրքիր է, որ օտար լրագրողի այսպիսի արձագանգը նաեւ կապուած է այն մարդկանց, որոնց հետ նա հարցազրոյց է անցկացրել: Վերոնշեալ յօդուածում լրագրողը նշում է հայ հոգեւորականի հետ զրոյցը եւ հոգեւորականի խօսքերը, որոնք որոշակի շեշտադրում էին Ցեղասպանութեան յիշողութեան միտումները: Օրինակ յօդուածում Ֆիսկը պատմում է.

> Երէկ ես կապուեցի Դամասկոսի եպիսկոպոս Արմաշ Նալբանդեանի հետ, ով պատմեց ինձ, որ Տէր Զօրի եկեղեցին տուժել է ռմբակոծութիւնից[8]: Եկեղեցու վնասուելուց զատ աւելի կարեւոր է Ցեղասպանութեան յիշողութիւնը, որն իրօք կարող է կործանուել...[9]:

Այստեղ կարելի է տեսնել, որ հոգեւորականը Տէր Զօրի ընկալումն արդէն իսկ տանում է դէպի Հայոց Ցեղասպանութիւն, որից յետոյ յօդուածագիրն ինքն է այն համեմատում Հոլոքոստի հետ եւ անցնում իւրաքանչիւր Ցեղասպանութեան յուշահամալիրի պահպանման պատմութեան կարեւորութեանը: Թերեւս հենց սիրիական պատերազմի դիտանկիւնը տեղափոխւում է Ցեղապանութեան յիշողութիւն:

Մամուլի հետաքրքիր երկրորդ անդրադարձը Ազատութիւն Ռադիօկայանի տեսանիւթերն էին, որոնք անընդհատ կապւում էին Ցեղասպանութեան հետ: Ազատութիւն Ռադիօկայանի լրագրողների հիմնական հարցերը հարիւր տարի առաջ ապրած ողբի-տրաումայի վերյիշումն էր եւ հենց հարցերը նոյն հոլովոյթն ունէին, որն աւելի առասպելական մեկնաբանութիւն էր ստանում սիրիահայերի կողմից: Որպէս օրինակ *«Հայաստան գաղթած սիրիահայ ընտանիքի համար «պատմութիւնը կրկնւում է»*[10] տեսանիւթը պատմում էր սիրիահայ մի ընտանիքի մասին, ովքեր արդէն երկու տարի է բնակւում են ՀՀում: Տեսանիւթը սկսւում է Հայոց Ցեղասպանութեան վերապրածների լուսանկարներով եւ այդ ընտանիքի պապերի (ովքեր եւս հաւանաբար Հայոց Ցեղասպանութեան վերապրողներ են) ընտանեկան լուսանկարների ցուցադրութեամբ: Սոյն տեսանիւթերի կարեւոր կէտերից էին նաեւ Հայոց Ցեղասպանութեան տարիներին հայաթափուած տարածքների վերաբերեալ վերյուշերի նկարագրումը, Ցեղասպանութեան

մասին ոչ-հակիրճ անդրադարձը եւ նոր միայն զրոյցը սիրիահայ փախստականների հետ[11]:

Մամուլի դիտարկումը հետաքրքիր նմանութիւն ունի Սումգայիթեան Դէպքերից յետոյ ՀՀում վերստին Հայոց Ցեղասպանութեան համեմատականի հետ: Սրա մասին Յարութիւն Մարութեանը նկատում է. «*1988թ. Ապրիլի 24-ին Եղեռնի զոհերի յուշահամալիր առանձին անհատներից, բայց աւելի շատ՝ կազմակերպութիւնների անունից բերուած փասնեակ ծաղկեպսակների սգոյ ժապաւէնները վկայում էին, որ դրանք ուղղուած էին ինչպէս 1915թ., այնպէս էլ Սումգայիթի զոհերի յիշատակին…*»[12]: Նոյնատիպ իրավիճակների կարելի էր հանդիպել հիմնականում սիրիահայերի ՀՀ հաստատուելու առաջին երկու տարիներին, երբ Ապրիլի 24ի մամուլի անդրադարձները հիմնականում սիրիահայերի շրջանակներում էր լինում: Օրինակ 2013 Ապրիլի 25ի armlur համացանցային պարբերականը «***Բախտ չունեցայ ուրախ հայի հանդիպել***»[13] խորագրով յօդուածում հարցազրոյցներ էր անցկացրել սիրիահայ փախստականների հետ, որոնք համեմատելի նիւթ էին հանդիսացել Հայոց Ցեղասպանութեան հետ սոյն կայքի համար: Այս նիւթում հետաքրքիր է, որ յօդուածագիրը յօդուածը շարադրում է այսպէս.

> Երէկ հազարաւոր հայաստանցիներ, արցախահայեր, սփիւռքահայեր եւ օտարերկրեայ հիւրեր այցելեցին Ծիծեռնակաբերդի յուշահամալիր եւ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին 98 տարի առաջ Օսմանեան Թուրքիայում ցեղասպանութեան զոհ դարձած աւելի քան մէկուկէս միլիոն հայերի յիշատակին: Երէկ «Ժողովուրդ»ը **Ծիծեռնակաբերդի յուշահամալիրում զրուցեց միքանի սիրիահայերի** հետ…[14]:

Այստեղ որոշակի շեշտադրում ենք տեսնում. այդ շեշտադրումը Հայոց Ցեղասպանութեան յիշողութեան «կենդանի վկաների» դերում տեսնում է սիրիահայերին, որով արդէն իսկ բանասացին ուղղորդում է դէպի սոյն յիշողութեան վերընկալումը կամ սեփական ընկալումներում վերստին դիտարկումը:

Շեշտուած հատուածները հիմնականում՝ **«գաղթեցին այստեղ» «սա մեր տունն ու հողն է»** արտայայտութիւնները եւս, ուղղակի կապ ունէին Հայոց Ցեղասպանութեան յիշողութեան հետ եւ այսկերպ փորձ էր արւում առաւել քան կառուցողական ձեւով անընդհատ համեմատականներ տալ «Հայոց Մեծ Ցեղասպանութեան» եւ «Սիրիահայերի գաղթը Հայաստանի Հանրապետութիւն» երեւոյթների հետ:

ԾԱՌԸ ԱՐՄԱՏԻՑ ՀԱՆԵՑԻՆՔ, ԷՍՏԵՂ ՆՈՐ ԾԱՌ ԿԸ ՏՆԿԵՆՔ...

Յիշողութեան մարդաբանութեան հոլովոյթում սիրիահայերի վերջին հնգամեակի ընթացքում տեղի ունեցած դէպքերը դիտարկւում են հետեւեալ կերպ.-

- Ինչպիսի՞ տրաումա են ապրել այս համայնքի ներկայացուցիչները եւ ինչպէ՞ս են կարողանում մեկնաբանել նրանք սոյն ողբ-տրաուման:
- Ինչպէ՞ս են պատկերացնում գաղթը արդէն 100 տարի իրենց հայրենիք կոչուած Սիրիայից եւ ի՞նչ է Հայաստանը իրենց հաւաքական յիշողութեան ամբողջութեան մէջ:
- Ո՞րն է կապը Ցեղասպանութեան յիշողութեան եւ ինչու՞ ենք այս դէպքերը ուղիղ գծով կապում հենց Ցեղասպանութեան յիշողութեան վերապրման:

Սոյն հարցերի պատասխանները գտնելու համար, որպէս մարդաբանութեան մեթոդ օգտագործել եմ խորը կենսագրական հարցազրոյցները, որի ընթացքում հիմնական շեշտը դրուել է ոչ թէ բուն հարցի որոշակի պատասխանների վրայ, այլ այս հարցերի իւրովի ընկալման եւ մեկնաբանման վրայ:

- Ծառ էինք տնկել, մեզի պտուղ էր տուել, ծառը արմատից հանեցինք, էստեղ նոր ծառ կը տնկենք, հունձքի ենք սպասում:
- Միշտ ջերմութիւն կայ, կարօտ կայ: Քիչ մը ազդեցութիւն ունի, փափաք կայ գալու, ինքնութիւն էլ կայ տուն ունենք էստեղ, մեր երկրորդ հայրենիքը Սիրիան է:
- Մեր հացը հոն է, պայմանները վատանան՝ հայրենիքում կը հաւաքուենք:

Սոյն մէջբերումները հարցապնդուողների գրոյթներից են, դեռ նոր էին ինքնաթիռից իջել եւ առաջին մտքերն էր, որ իրենք արտայայտում էին: Ի՞նչ է էստեղ կարեւոր: Այստեղ ուշագրաւ է այն, որ բոլոր երեք մէջբերումներում էլ տեսնում ենք Հայաստանը, որպէս հաւաքական հայրենիքի ընկալում: Որպէս խորհրդանիշներ օգտագործւում են «ծառ», «հաց», «տուն» եզրոյթները:

Իսկ ո՞րն է Ցեղասպանութեան յիշողութեան արտայայտումը գրոյթներում՝ ահա.-

- Իմ ծնողները, պապիկս տատիկս Այնթէպից են եկել, իսկ միւս մասը Եդեսիայէն: Տարբեր տանջանքներով դժուարութիւններով, Ուրֆայի ջարդը ահաւոր եղել է, իսկ Այնթապի ջարդն էլ եղել է, իմ ընտանիքը բեռնաւորուած կարողացել են բերել: Ի՞նչ կը կարողանան բերել, աւտօբուսներ բան չի եղել:

Հարցապնդուողը մեծ դժուարութեամբ հասել էր Լիբանան եւ ապա այնտեղից ինքնաթիռով հասել Երեւան: Իր նախնիների տանջանքները պատմելիս փորձում էր համեմատական անցկացնել իր նոր տրաումայի եւ հաւաքական տրաումայի միջեւ: Փաստօրէն «աւտօբուսը» եզրոյթ էր, որով իր տրաուման փոքրացնում էր պապերի ապրած Ցեղասպանութեան տարիների գաղթին համեմատելով, բայց արդէն իսկ համեմատականը խօսում էր ողբի-տրաումայի վերապրման մասին:

- Սա մեր երկրորդ գաղթն էր...
- Պատմութիւնը կրկնւում է, բայց այս անգամ մենք գաղթել ենք Հայաստան:

Սրանք եւս արտայայտութիւններ են, որոնք ցուցում են Ցեղասպանութեան յիշողութիւնը, որն ինքնութեան մէջ է եւ այդ յիշողութեան արտայայտումը դրսեւորւում է համեմատականի ձեւով. Սիրիական Ճգնաժամի ընթացքում ի յայտ եկած դժուարութիւնները համեմատւում են պապերի վերապրած դժուար օրերի հետ:

Այս բանալի-խօսքերից բացի, հետաքրքիր էր, որ բոլոր հարցազրոյցներում իրենց կենսագրութեան պատմութիւնը սկսւում էր ոչ թէ Սիրիայի այս կամ այն քաղաքի մասին պատումով, այլ սկսում էին պատմել, որ իրենք Արեւմտեան Հայաստանի այս կամ այն քաղաքից են եւ մեծ պապը Հայոց Ցեղասպանութեան տարիներին մազապուրծ հասել է Սիրիա: Փաստօրէն կենսագրականները սկսւում էին, ոչ թէ իրենց մանկութիւնից կամ կեանքի անկիւնադարձային դէպքից՝ ծնունդ, հարսանիք, պաշտօն ստանձնել, համայնավար լինել, այլ հենց Հայոց Ցեղասպանութեան նախօրէից, որն էլ մեծապէս ազդեցութիւն էր թողնում իրենց ներգաղթի ընկալման ու այն ներկայացնելու վրայ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Որպէս վերջաբան փորձենք վերոգրեալ նիւթի քննական վերլուծութեան մէջ հիմնական կէտերի անդրադարձը տալ: Այսպէս, որպէս հիմնակէտեր են.-

- Հայ նահատակների ոսկորների վրայ սկսուեց սիրիական հակամարտութիւնը (Ազատութիւն TVն սիրիահայերի՝ Հայաստան վերադարձի մասին).
- Ցեղասպանութեան յիշողութիւնը եւ «գաղթ»ի վերապրումը սիրիահայոց ընկալումներում:

Առաջին հատուածում, ներկայացնելով միջազգային եւ տեղական՝ հայկական մամուլի արձագանգը սոյն խնդրին, թերեւս, թւում է, թէ բոլոր կէտերով փորձ էր արւում պաշտօնական, եկեղեցական մակարդակով

իրօք համեմատական անցկացնել Հայոց Ցեղասպանութեան եւ Սիրիական Ճգնաժամի տարիներին սիրիահայերի՝ ՀՀ հաստատուելու հետ:

Երկրորդ հատուածում, դաշտային նիւթի քննարկումը ցոյց է տալիս, որ գաղութային ընկալումներում ընդհանրապէս արմատների վերաբերեալ վերյուշը բնական երեւոյթ է եւ միգուցէ այն խաղաղ պայմաններում էլ սոյն թեմային անդրադարձ անի՝ առանց Հայոց Ցեղասպանութեան հետ համեմատականի: Իհարկէ այստեղ կարելի է նշել պաշտօնական եւ մամուլի արձագանգների ազդեցութիւնը անհատական կարծիքների վրայ, սակայն ամէն դէպքում այն փաստը, որ իւրաքանչիւր գաղութահայ իր՝ տուեալ էթնոսին, համայնքին պատկանելութիւնը արտայայտում է վերադարձ արմատներին սկզբունքով, ապա այստեղ կասկածելի է թւում անհատական մակարդակով այս երկու դէպքերի **յստակ համեմատականի՝ Ցեղասպանութիւնից մազապուրծ ու Սիրիական ճգնաժամի տարիներին Հայաստան ներգաթի, ներկայութիւնը:** Որից ելնելով էլ յստակ չի պարզորոշւում արդեօ՞ք ՀՀ ներգաղթեալ սիրիահայերը իրենց համարում են «վերադարձողներ» իսկ այս ներգաղթի պատճառները համեմատում Մեծ Եղեռնի «պատմութեան կրկնութեան հետ»՝ հիմք ընդունելով ընտանեկան, ընկերային, համայնքային յարաբերութիւններում Մեծ Եղեռնի յիշողութեան մեծ դե՞րը, թէ՞ այսկերպ ներգաղթի ներկայացնելը կապուած է հենց պաշտօնական եւ լրատուական տեսակէտների ու քարոզի հետ:

Չբացառելով ողբի յիշողութեան դերն ու դրա փոխակերպումն ու տեղայնացումը մի նոր ողբի իյայտ գալու հետ՝ զգուշօրէն, բայց հիմնաւոր առաջ ենք քաշում այն տեսութիւնը, որ արտաքին (այստեղ նկատի ունենք պաշտօնական տեսակէտն ու մամուլի քարոզչութիւնը) ազդեցութիւնը իր հետքն է թողել Սիրիական Ճգնաժամը Հայոց Մեծ Եղեռնի «շարունակութիւն» ընկալելու վրայ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Յարութիւն Մարութեան, *Յիշողութեան Դերն Ազգային Ինքնութեան Կառուցուածքում*, Երեւան, «Նորավանք» ԳԿՀ, 2006, էջ 6՝

[2] Սոյն յօդուածում անդրադարձը վերաբերում է 2011-2015ի ընթացքում Հայաստան ներգաղթած սիրիահայերին:

[3] http://kasa.am/?page_id=7 (մատչում՝ 16 Հոկտ. 2015):

[4] Բոլոր եզրոյթները, որոնք այս կամ այն կերպ կ'առնչուեն սիրիահայերի տեղաշարժը անուանելու հետ մենք կը վերցնենք չակերտների մէջ, դրանով իսկ խուսափելով արհեստական ուղղորդում ապահովելուց:

[5] Ընկերային Facebook ցանցի միջոցով մէկ հարցի՝ «Ես հայ եմ, որոուհետեւ» պատասխանների գերիշխող մեծամասնութիւնը բնութագրում էր ինքնութեան կարեւոր ցուցիչ՝ Ցեղասպանութիւն ապրած լինելը:

[6] Հարցումների ընթացքում «Ե՞րբ էք առաջին անգամ լսել Հայոց Ցեղասպանութեան մասին» հարցին մեծամասնութեան պատասխանը 5-6 տարեկանն էր, իսկ յաջորդ տարածուած պատասխանը «Մայրիկ» ֆիլմի միջոցով, որը 1980-90ականներին ծնուածների համար համապատասխանում է 5-10 տարեկան հասակը:

[7] http://www.independent.co.uk/voices/comment/nearly-a-century-after-the-armenian-genocide-these-people-are-still-being-slaughtered-in-syria-8975976.html (մատչում՝ 16 Հոկտ. 2015):

[8] Այն տեղի ունեցաւ 21 Սեպտեմբեր 2013ին:

[9] Բնօրինակը՝ http://www.independent.co.uk/voices/comment/nearly-a-century-after-the-armenian-genocide-these-people-are-still-being-slaughtered-in-syria-8975976.html (մատչում՝ 17 Հոկտ. 2015):

[10] Սոյն տեսանիւթը կարող առկայ է http://www.azatutyun.am/content/article/26976585.html (մատչում՝ 16 Հոկտ. 2015):

[11] Մենք փորձում ենք օգտագործման մէջ ներառել «փախստական» եզրոյթը որպէս անկողմնակալ դիրքորոշում, քանի որ «վերադարձ» եւ «գաղթական» եզրոյթները սոյն քննարկման շրջանակներում նոյնացւում են Հայոց Ցեղասպանութեան հետ:

[12] Յարութիւն Մարութեան, *Հայ Ինքնութեան Պատկերագրութիւնը, Ցեղասպանութեան Յիշողութիւնը եւ Ղարաբաղեան Շարժումը*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ. 2009, էջ 129-130:

[13] http://armlur.am/45817/ (մատչում՝ 16 Հոկտ. 2015):

[14] Նոյն:

Genocide Memory and the Syrian Armenians:
Return to the Fatherland (Memory Anthropology)
(Summary)

Khoren Grigorian
xorenbask86@gmail.com

The paper studies Syrian Armenians temporarily or permanently settled in the Republic of Armenia (RA) as once-more refugees and argues that this refugee crisis provides new motivation for establishing a collective memory of the Armenian genocide.

The paper is based on extensive interviews with ten Syrian-Armenian refugees, in which it becomes evident that these refugees see their settlement in RA as a continuation of their refugee identity. Alongside the interviews Syrian Armenian survivors' memoirs have been researched and referred to in order to validate the author's arguments. Thus, a renewed version of perception of oneself as a refugee in the third and fourth generation is registered.

Based on the experience of these Syrian Armenian refugees, the paper describes memory of the Genocide from a human archeological memory perspective.